# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՎՐԱ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ՏՆՕՐԵՆ**

0054 ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ.
Ա. Միկոյան փող. 109/8, 1-ին մասնաշենք

էլ . փոստ saiap@mail.ru
հեռ. 010 31 78 72

**«08» մայիսի 2014 թ.**

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով

մրցույթի շրջանակներում գրանցված կազմակերպություններին

Հարգելի գործընկեր,

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԱԻՆ «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և մրցույթի շրջանակներում գրանցված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Ապրանքների մատակարարման պայմաններն են չօգտագործված, գործարանային նմուշի:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. Ա. Միկոյան փող. 109/8, 1-ին մասնաշենք, 1-ին հարկ, ՀՀ ԱԻՆ ԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Դոլինյանին, մինչև 2014 թ. մայիսի 21-ին, ժամը 11:00-ին:

Հայտերը կբացվեն ՀՀ ԱԻՆ «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ի շենքում, ք.Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. Ա. Միկոյան փող. 109/8, 1-ին մասնաշենք, 2-րդ հարկ, ՆԱԲ սենյակում 2014 թ. մայիսի 21-ին, ժամը 11:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

**Մրցույթի ծածկագիրն է <<ՄԵՎԱՆԾ-ՇՀԱՊՁԲ-11/13>>**

**Հարգանքով**

**Ա. Կարապետյան**

*կատ. Նյութատեխնիկական ապահովման բաժին*
*հեռ. 010 31 78 72*